Ի ՀԻՇԱՏԱԿ

ՄԵԾ ՀՈՒՄԱՆԻՍՏՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Է.Ս. Մարգարյանի ծննդյան 90 – ամյակի առթիվ)

Գևորգ Պողոսյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտական ղեկավար
Սարգիս Հայրապետյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայկական պետական տնտեսագիտական համալսարան

Անվանի գիտնական-մշակութաբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է.Ս. Մարգարյանը ծնվել է 1929թ. դեկտեմբերի 24-ին մտավորական ծագում, բարձր բարոյական նկարագիր ունեցող երևանյան ընտանիքներից մեկում: Լիարժեք դաստիարակությունն ու փայլուն կրթությունը ապագա գիտնականին ապահովեցին այնպիսի բարոյական նկարագիր, որի հիմքում բնածին բարեկրթությունն էր, ինքնադաստիարակության ու կրթության ներդաշնակ միասնությունը, որն էլ կանխորոշեց նրա գործունեության ու գիտական հետաքրքրությունների հետագա ընթացքն ու ուղղվածությունը: Մարգարյան-մարդու բարոյական որակները պայմանավորեցին նրա կողմնորոշումը՝ համամարդկային արժեքներ, բարու զգացում, արդարության ու խղճի թելադրանք, ապրումակցում (էմպատիա), այլակարծության հանդեպ հանդուրժողականություն, ազնվություն ու չափի նուրբ զգացողություն: Այս հատկանիշները, ինչ-պես և գիտական գործունեության բնույթն ու արդյունքները թույլ են տալիս նրան դասել առաջավոր մշակույթի արտահայտիչների թվին: Է. Մարգարյանը հումանիստ էր այս հասկացության ինչպես մասնագիտական, այնպես էլ բարոյահոգեբանական, գաղափարական իմաստներով:

Է.Մարգարյանը 1947թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, մեկ տարի անց տեղափոխվում Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի միջազգային իրավունքի ֆակուլտետ, որն ավարտում է 1953թ.: Ուսանողական տարիներից

առանձին հետաքրքրություն է դրսևորում փիլիսոփա-յական առար-կաների նկատմամբ։ Ինստիտուտում առկա բարձր ինտելեկտուալ մթնոլորտը, դասախոսների հետաքրքրությունը սոցիալական փիլիսո-փայության հիմնախնդիրների, խորհրդային հասարա-կագիտության համար նոր գիտակարգերի նկատմամբ, մեծապես կանխորոշեցին Է.Մարգարյանի հետագա գիտական հետա-քրքրությունները։ Հրաժարվելով դիվանագիտական կարիերայից 1953թ. ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ արտասահ-մանյան փիլիսոփայության պատմություն մասնա-գիտութ-յամբ։ Այն ավարտելով, 1958թ. ՄՊՀ փիլիսոփայության ֆակուլտետում փայլուն կերպով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հասա-րակական շրջապտույտի հայեցակարգի պատմական ակնարկ ու քննադատական վերլուծություն» թեմայով (գիտ. ղեկ. ակադ. Գ.Պ. Ֆրանցեվ)։

Պրոֆեսոր Է.Մարգարյանը 1958 թվից ավելի քան կես դար աշխատել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ լինելով նրա նվիրյալներից ու գիտության քրմերից մեկը։ Այստեղ էլ նա կազմակերպել ու երկար տարիներ (1973-1992) ղեկավարել է Խորհրդային Միության միակ՝ Մշակույթի տեսության բաժինը, որն, ըստ էության, կատարում էր մշակութաբանական և ավանդույթաբանական հետազոտությունների կազմակերպչական կենտրոնի գործառույթը ԽՍՀՄ-ում։ Նրա ղեկավարությամբ այս բաժնում կազմավորվել էր մշակութաբանների մի հետաքրքիր ու կարող համախումբ՝ Կ.Սարինգուլյան, Է. Մելքոնյան, Ի.Բարսեղյան, Ս.Ենգիբարյան և ուրիշներ, որոնք, ըստ էության, դարձան նրա գիտական դպրոցի սաները և գաղափարների առաջին զարգացնողներն ու տարածողները։ Զուգահեռաբար մշակութաբանական հատուկ դասընթացներ էր վարում ԵՊՀ փիլիսոփայության ֆակուլտետում, 1984թ. ստացել է պրոֆեսորի կոչում, աճեցրել գիտության բազմաթիվ թեկնածուներ և դոկտորներ, ավելի քան քառասուն տարի ֆակուլտետի փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ էր։

Երկարատև ու գիտական նվաճումներով հագեցած իր կյանքում նա ստեղծել է ավելի քան երկու հարյուր գիտական աշխատություն, այդ թվում երեսուն մենագրության հեղինակ է։ Որոնք հրատարակվել են ոչ միայն Հայաստանում և Ռուսաստանում, այլև աշխարհի բազմաթիվ այլ

երկրներում։ Է. Մարգարյանը ավելի քան կես դար Հայաստանի յուրատեսակ գիտնական-դեսպան էր փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության բնագավառներում՝ ամենից առաջ Ռուսաստանում, ապա և աշխարհի մյուս երկրներում՝ Հայաստանը ներկայացնելով միջազգային տարբեր կարգի գիտական հանդիպումներում ու համաժողովներում, արտասահմանյան գիտական մամուլում։

60-ական թվականների սկզբից, հետաքրքրվելով այդ տարիներին Արևմուտքում ինտենսիվորեն զարգացող համակարգերի ընդհանուր տեսությամբ, Մարգարյանը նախկին Խորհրդային Միությունում առաջիններից մեկն էր իր առջև դրեց աննախադեպ խնդիր՝ կապակցել համակարգային մոտեցումը էվոլյուցիոն սոցիոմշակութային գործընթացների հետազոտման հետ, նրա հիմնարար սկզբունքները գործադրելով մարդկանց հասարակական կյանքի, մարդկային գործունեության ու մշակույթի ֆենոմենի ուսումնասիրման նկատմամբ։ Արդյունքում, ինչպես նշվում է ռուսական գրականության մեջ, մշակույթի և հասարակության համակարգային հետազոտության սկզբունքների մշակումը ամբողջապես դարձավ նրա անձնական գիտական վաստակը։ Այդ ժամանակ էլ նա ձեռնարկեց դոկտորական ատենախոսության նախապատրաստումը՝ «Հասարակական կյանքի համակարգային հետազոտության մեթոդաբանական հիմնա-խնդիրները» թեմայով, որը պաշտպանեց ԽՍՀՄ ԳԱ Փիլիսոփայության ինստիտուտում 1967 թ.։ Այն ԽՍՀՄ ԲՈՀ-ը որակեց որպես հասարակագիտության բնագավառում այդ ժամանակների լավագույն հետազոտական աշխատանքներից մեկը։ Հենց հասարակության համակարգային հետազոտության մեթոդաբանության մշակման գործընթացում նա իր համար բացահայտեց մշակույթի ֆենոմենը որպես գործունեության ամբողջական մեխանիզմ, որը հասարակութ-յան մեջ կատարում է բազմաթիվ կենսականորեն կարևոր գործա-ռույթներ։ Ավելի ուշ նրա գիտական հետազոտությունների դաշտում հայտնվեցին մարդկային գործունեության ու մշակույթի **ծագման** հարցերը։ Գիտության մեջ մշակույթի գենետիկայի հիմնախնդիրը 1920-ական թթ. կեսերին առաջադրել է ակադեմիկոս Ն.Մառը։ Տևական ընդմիջումից հետո խորհրդային մշակութագենետիկական հետազո-տությունների վերածնունդը տեղի ունեցավ միայն 1970-ական թվականների սկզբին և կապված է Է.Մարգարյանի ու ակադեմիկոս

Ալեքսեյ Օկլադնիկովի (1908-1981) անվան հետ: Հենց նրանք էլ միաժամանակ և իրարից անկախ ռուսալեզու գրականության մեջ առաջին անգամ օգտագործեցին «մշակութածագում» (, , культурогенез”) հասկացությունը: Իր հետազոտության մեջ[1] Է.Մարգարյանը, ըստ էության, վերակենդանացրեց գենետիզմը՝ որպես հայեցակարգային մոտեցում, ինչը, նրա կարծիքով, թույլ է տալիս բացահայտել, «մերկացնել» ուսումնասիրվող երևույթի միջուկը և նրա ծագման հիմնական պատճառները: Ավելին, նա ընդգծում է, որ գործունեությունից դուրս մշակույթ գոյություն ունենալ չի կարող, ինչպես և չի կարող գոյություն ունենալ մարդկային գործունեություն նրա պատմա-մշակութային համատեքստից դուրս: Ինչպես նկատում է ռուս մշակութաբան Ա.Վ.Բոնդարևը. «...Նշանակալի չափով նաև հենց շնորհիվ Է.Մարգարյանի ջանքերի Ռուսաստանում վերածնվեցին մշակութագենետիկական հետազոտությունները, իսկ նրա աշխատությունները որպես հիմք ծառայեցին ոչ միայն հայրենական գիտության մեջ մշակութաբանության ամենաազդեցիկ հայեցա-կարգերից մեկը ստեղծելու, այլև վճռական նշանակություն ունենալու մշակութածագման հետազոտության մեջ փիլիսոփայական-մշակութա-բանական մոտեցման ձևավորման համար»[2]:

70-ական թթ. կեսերից Է.Մարգարյանը սկսեց ավանդույթա-բանության սկզբունքների մշակումը: Ավանդույթն իր մշակութային տեսակով ստեղծվել է մարդկային հասարակության ծագման ու զարգացման ընթացքում: Մշակութային ավանդույթը կենսափորձի կուտակման ու հաղորդման որակապես նոր մեխանիզմ է: Ցանկացած նորամուծություն, եթե այն ընդունվում է այս կամ այն խմբի մեջ մտնող բազմաթիվ մարդկանց կողմից, արդյունքում կարծրատիպանում ու փոխարկվում է ավանդույթի: Եթե մշակույթը արտահայտում է մարդկային գործունեության յուրահատուկ եղանակը, ապա մշակու-թային ավանդույթը կոչված է արտահայտելու մեխանիզմներից մեկը, որի օգնությամբ իրականանում է այդ գործունեությունը: Իսկ ավանդույթաբանություն ասելով պետք է հասկանալ ավանդույթների

---

[1] **Маркарян Э.С.** О генезисе человеческой деятельности и культуры, Ер., 1973, 143 С.

[2] **Бондарев А.В.**, Вклад Э.С. Маркаряна в становление отечественных культурогенетических исследований. В кн.: Культурогенез и культурное наследие (науч. ред. и сост. А.В. Бондарев, М., СПб, 2014.С.50). Ի դեպ, հոդվածների այս ժողովածուն նվիրվել է Է. Ս. Մարգարյանի և Վ. Մ. Մասսոնի հիշատակին:

դասի, դրանց դինամիկական վերափոխությունների օրենքների ու մեխանիզմների մասին գիտությունը: Ավանդույթաբանությունը հարկ է համարել մշակութաբանության բաղկացուցիչ, բայց շատ յուրահատուկ մասը: Ավանդույթաբանությունը գիտակարգ է, որը ծնվել է հասարակական ու կենսաբանական գիտությունների սահմանագծում: Է.Մարգարյանն առաջինների թվում էր, ով կարողացավ բացահայտել ավանդույթների գործառության օրենքներն ու մեխանիզմները՝ լայն էվոլյուցիոն հեռանկարում, սոցիոմշակութային ու կենսաբանական համակարգերի մշտական հարաբերակցության մեջ, որի շնորհիվ նա դարձավ մարդկանց կենսափորձի վերափոխման ընդհանուր տեսությունը ստեղծող գիտնականներից մեկը:

Է.Մարգարյանը առաջատարներից մեկն էր Խորհրդային Միությունում, ով 60-ական թթ. սկսեց հանգամանորեն ուսումնասիրել մշակույթի տեսության տրամաբանական-մեթոդաբանական հիմնախնդիրները, կատարել նրա առարկայի, օբյեկտի սահմանազատումը, հանդես գալով նաև այդ գիտության՝ իբրև հասարա-կագիտության յուրահատուկ բնագավառի առանձնացման գիտական անհրաժեշտության պահանջով: 80-ական թթ. սկզբներին ամփոփելով այդ տեսության մշակման արդյունքները, նա գիտական հասարակայնությանը ներկայացրեց իր հերթական ուսումնասիրությունը[3]: Այս մենագրությունը դարձավ մշակույթի մշակութաբանական տեսության վերաբերյալ հիմնարար աշխատություններից մեկը: Է.Մարգարյանի հանդուգն ջանքերի ու հետևողականության շնորհիվ մշակութաբանությունը դուրս եկավ սոցիալ-հումանիտար գիտությունների գիտակարգային դաշտ պրակտիկորեն ողջ հետխորհրդային տարածքում:

Է.Մարգարյանի երկարամյա գիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ անցյալ դարի 50-ական թթ. կեսերից մինչև 80-ական թթ. կեսերը և 80-ական թթ. կեսերից մինչև իր կյանքի վերջը: **Առաջին շրջանն** առանձնանում է լուրջ ձեռքբերումներով մշակույթի տեսության հիմնախնդիրների հետազոտության բնագավառում: Անցյալ դարի 60-80 թթ. նրա մշակած հասարակության՝ որպես համընդհանուր «հարմարող-հարմարեցնող» համակարգի, մարդկային գործունեության՝

[3] **Маркарян Э.С.,** Теория культуры и современная наука: (логико-методол. анализ). М., 1983, 284 С.

իբրև կենդանի համակարգերի տեղեկատվորեն ուղղորդվող ակտիվության, մշակույթի՝ որպես մարդկային գործունեության վերկենսաբանական համընդհանուր եղանակի (տեխնոլոգիայի), որի միջոցով խթանվում, շահադրդվում, ծրագրավորվում, կատարվում, վերարտադրվում և փոփոխվում է այդ գործունեությունը, ինչպես նաև մշակութային ավանդույթների գիտական բացատրության չափազանց ազդեցիկ ուղղությունները 90-ականներին ռուսաստանցի մասնա-գետներն անվանեցին **Հայկական մշակութաբանական դպրոց**: Է. Մարգարյանի մշակած մշակութաբանական ու ավանդութաբանական տեսության հիմնական դրույթներն են:

- սովորույթի ուժով «մշակույթ» հասկացության բովանդակությունն ամենից առաջ հանգեցվում է արվեստին և դրա հետ կապված մի շարք այլ երևույթների, որի հետևանքով մարդիկ իրենց զրկում են կարևորագույն կատեգորիայից, որը կոչված է արտահայտելու գործունեության իրականացման ընդհանուր, վերկենսաբանորեն մշակված համընդհանուր եղանակը (տեխնոլոգիան),
- «մշակույթ» հասկացության բովանդակության անհարկի, չարդարացված նեղացման մասին է խոսում այն փաստը, որ այսօր գիտության մեջ լայնորեն օգտագործվում են մի շարք մշակութաբանական հասկացություններ՝ նյութական մշակույթ, հոգևոր մշակույթ, բարոյական մշակույթ, քաղաքական մշակույթ, գիտակրթական մշակույթ և այլն, որը փաստում է, որ հասկացությունը ներառում է ընդհանուր անփոխարինելի իմաստային նշանակություն, որն արդարացնում ու հնարավոր է դարձնում բառակապակ-ցությունների կիրառությունը՝ վկայելով քննարկվող երևույթի ապշեցուցիչ իմաստային բազմազանության մասին.
- մշակույթը, ըստ իր ելակետային կողմնորոշման, հարմարողական մեխանիզմ է, որի միջոցով ինքնապահպանման նպատակով հասարակությունը համապատասխանեցվում է շրջապատող միջավայրին, բնությանը,
- հասարակությանը բնորոշ կյանքի տիպը կոչվում է սոցիոմշակութային այն հիմնավորմամբ, որ մշակույթը, ներթափանցելով հասարակական օրգանիզմի բոլոր «ծակոտիները», որոշում է մարդկանց կենսագործունեության ոլորտների կարգը,
- մշակույթին հատուկ է նաև մարդկանց նորամուծական ու կարծրատիպային վարքի փոխադարձ փոխարկման մեխանիզմներ,

որոնք արտացոլվում են մշակութային ավանդույթների շարժընթացում և ընկալվում որպես մարդկային գործունեության խմբային կարծրատիպեր,

- «մշակույթը» կյանքի է կոչվել՝ իրականացնելու մի շարք հիմնարար գործառույթներ: Դրանցից են մարդկային գործունեության խթանման, շահադրդման, ծրագրավորման, համակարգման, անհատական ու հասարակական պահանջմունքների բավարարման, ժողովուրդների ինչպես փոխադարձ, այնպես էլ շրջապատող բնական համալիրների հետ փոխազդեցության, հասարակական կյանքի վերարտադրության ու փոփոխության գործառույթները:

Է.Մարգարյանի գիտական գործունեության ու գաղափարների ազդեցությամբ մեզանում իրականացվեցին հետաքրքիր մշակութաբանական հետազոտություններ, գրվեցին դասագրքեր, բուհերի, մասնավորապես ԵՊՀ, ՀՊՏՀ ուսումնական ծրագրերում ընդգրկվեց և այսօր էլ հաջողությամբ ուսուցանվում է «Մշակութաբանություն և հայ մշակույթի պատմություն» դասընթացը: Աճեց հայ մշակութաբանների մի ամբողջ սերունդ՝ Ա.Սարգսյան, Ս.Սարգսյան, Գ.Մելքումյան, Յու.Հովականյան, Մ.Նիկողոսյան, Ս.Հարությունով «Մոսկվա», Է.Աբրահամյան «Տաշքենդ» և այլք, որոնք հաջողությամբ շարունակում են Է.Մարգարյանի սկսած գործը:

Այսօր Է.Մարգարյանի ստեղծած գիտական դպրոցը ունի բազմաթիվ հետևորդներ նաև արտասահմանյան երկրներում՝ հատկապես Ռուսաստանում: Այդ երկրի գիտական շրջանակներում նա ընդունվում է իբրև «ռուսական մշակութաբանության սկզբնավորող»[4]: Ավելին, Է.Մարգարյանը ճանաչվում է որպես երկու ժողովուրդների, երկու երկրների՝ Հայաստանի և Ռուսաստանի մշակութաբան-փիլիսոփա[5]: Բացառիկ մի ճակատագիր, որը չի ունեցել անգամ նշանավոր Պոլ Հոլբախը, ով թեև ծագումով գերմանացի է, սակայն ամբողջ աշխարհը նրան ճանաչում է որպես ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա:

Ավելի վաղ Ռուսաստանում լույս տեսած «Մշակութաբանություն: Հանրագիտարանային բառարանում» Մարգարյան-մշակութաբանը ներկայացվում է «Որպես մշակույթի համակարգի տեսական

---

[4] **Флиер А.Я.,** К открытию новой рубрики // Философские науки, 2000, №2.С.17.

[5] **Մարգարյան Է.Ս.**, Հայկական համառոտ հանրագիտարան, խմբագիր՝ Հ.Մ. Այվազյան, Եր., 1999, հ. 3, էջ 603-604: Маркарян Э.С., В кн. **Алексеев П.В.,** Философы России 19-20-х столетий. Биографии. Идеи. Труды. М., 2000.С.606.

հիմնախնդիրների հայտնի հետազոտող։ Նշանակալից ավանդ ունի «Մշակույթը որպես համակարգ» տեսական հիմնախնդրի մշակման մեջ, հայրենական գիտությունում սկսեց կիրառել «կուլտուրոլոգիա» տերմինը, իսկ «լոկալ կուլտուրա» տերմինով առաջարկեց բնութագրել էմպիրիկորեն գոյություն ունեցող կուլտուրաները։ Հայտնի է որպես կուլտուրայի տեխնոլոգիական հայեցակարգի կողմնակից»[6]։ Ավելին, Մարգարյանը 1980-ական թթ. կեսերից ճանաչվում է իբրև խորհրդային հասարակագիտության և մշակութաբանության առաջնորդներից մեկը։ Այս շրջանից էլ ավելի է տարածվում Մարգարյանի գիտական վաստակի ու հեղինակության միջազգային ճանաչումը։

Է.Մարգարյանի գիտական գործունեության **երկրորդ շրջանին**, որն ընդգրկում է 80-ական թթ. կեսերից մինչև իր կյանքի վերջը, բնորոշ է հումանիստական ուղղվածությունը՝ խարխսված առաջին շրջանի զուտ տեսական հետազոտության արդյունքների վրա։ Ավանդաբար մարդկային գիտակցության մեջ հումանիզմը զուգորդվում է օգնության կարիք ունեցողների նկատմամբ կարեկցանքի, գթասրտության և մի շարք այլ զգացումների հետ։ Ընդունելով այդ ապրումների նշանակալիությունը, ըստ նրա, մարդկության գլխին կախված մահացու սպառնալիքների համատեքստում դրանք պետք է հանդես գան որպես որակապես նոր բնույթի հումանիստական գաղափարախոսության ու գործունեության բաղադրիչներ՝ նպատակաուղղված ինքնապահ-պանության խնդրի լուծմանը։ 1990-ական թթ. Մարգարյանի գիտական գործունեությունը կենտրոնանում է մարդկության գոյատևման ու զարգացման ռազմավարական հիմնախնդիրների վրա։ Նրա այս շրջանի գիտական ու կազմակերպչական գործունեության վրա էական ազդեցություն ունեցավ համագործակցությունը Մարդկության գոյատևման ու զարգացման միջազգային ֆոնդի (1988-1992) հետ, որի շտաբ-բնակարանները Մոսկվայում, Վաշինգտոնում, Ստոկհոլմում էին։ Դրա շնորհիվ՝ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում Է.Մարգարյանի նախաձեռնությամբ ստեղծվեց (1992) Գոյատևման ու զարգացման հիմնարար ռազմավա-րական հետազոտությունների բաժինը, իսկ 1994-ին՝ Գոյատևման ու զարգացման ռազմավարությունների մշակմանն աջակցող միջազգային

[6] Маркарян Э.С., В кн. **Хоруженко К.М.**, Культурология. Энциклопедический словарь, Ростов-на-Дону, 1997.С.289-290.

ասոցիացիան՝ ԳԶՌՄԱՄ (Երևան), որի նախագահն էր մինչև կյանքի վերջը։ Ավելի ուշ՝ 1998 թ. լույս տեսած «Համաշխարհային ստրատեգիական կառավարման ունակությունը»[7] մենագրությունում, շարադրվեցին նաև վերոհիշյալ ասոցիացիայի ծրագրային նպատակներն ու խնդիրները։ Այս ուղղությամբ Է.Մարգարյանի գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «21-րդ դարի հումանիզմը։ Մարդկության ինքնապահպանման գաղափարախոսությունը» մենագրության մեջ, որի ներածականում ասվում է, որ այն «կարելի է համարել գոյատևման-զարգացման ռազմավարական հիմնախնդիրների ոլորտի ձեռնարկ»[8]։

Ըստ Է.Մարգարյանի՝ այսօր մարդկության սոցիոմշակութային էներգիայի մի չնչին մասն է ծախսվում գոյատևման ռազմավարական նպատակների իրականացման ուղղությամբ. դրա առյուծի բաժինն ուղղվում է սպառազինությունների մրցավազքի ապահովմանը, տեղային բախումների թվացյալ լուծմանը։ Եվ քանի որ սոցիոմշակութային էներգիան ինստիտուցիոնալ ուղղվածություն ունի, ապա, նրա մոտեցմամբ, 21-րդ դարի նախագծի նպատակադրումը կարող է բոլոր մակարդակի ինստիտուտների, դարաշրջանի իրողությունների՝ գոյատևման ու զարգացման ռազմավարական հրամայականների հետ համապատասխանության ապահովման ճանապարհով լինել։ Է.Մարգարյանի հայեցակարգի համաձայն՝ համաշխարհային քաղաքակրթությունն այսօր հայտնվել է «ծուղակում», որի մեջ ներքաշվել է տեխնածին, ապա նաև սպասարկման հասարակության կողմից՝ դրանց բնորոշ ամենաթողության ու սպառողական հոգեբանությամբ, որը ներկայանում է երկու՝ «ճանաչողական» ու «նորմատիվ-արժեքային» ծուղակների տեսքով։

«Ճանաչողական ծուղակը» այս կամ այն երևույթի, գործընթացի, էական անհամապատասխանությունն է դրանց իրական բնույթի ընկալման, գիտության ու կրթության համակարգի զարգացման առկա գերակայությունների, գիտելիքների ու մասնագետների պատրաստման ու օգտագործման եղանակների և ժամանակակից դարաշրջանի կողմից դրանց առաջադրվող ռազմավարական պահանջների միջև։ «Ճանա-

[7] **Edward S. Markarian**. Capacity for world strategic management, Y., 1998, 202 p.

[8] **Маркарян Э.С.,** Гуманизм 21-го столетия. Идеология самосохранения человечества. Ер., 2008.С.18.

չողական ծուղակի» կարևոր բաղադրիչներից է նաև հասարակագիտությունը՝ իր այսօրվա ոչ այնքան նախանձելի վիճակով։ Դա, ըստ Է.Մարգարյանի բնութագրման, արդի քաղաքակրթության աքիլլեսյան գարշապարն է, որը արմատական բարեփոխման կարիք ունի։

«Արժեքային-նորմատիվ ծուղակի» բովանդակությունն առանձնանում է մի կողմից՝ հնացած, իրենց դարն ապրած կայսերական մտածելակերպի, մշակույթի (ներառյալ՝ նոր կայսերական տարբերակները) արժեքների ու նորմերի, մյուս կողմից՝ մարդկության գոյատևման ու զարգացման ռազմավարական հրամայականների միջև առաջացած, անհամապատասխանությամբ։

Եթե «ճանաչողական ծուղակից» դուրս գալու համար մարդկությունից պահանջվում է լարել բոլոր մտավոր ունակությունները, ապա «արժեքային-նորմատիվ ծուղակի» դեպքում ժամանակակից քաղաքակրթությունը զգում է նոր, հումանիստորեն կողմնորոշված համապատասխան հիմքի անհրաժեշտություն։ Ավելին, զգացվում է գլոբալ էթիկայի՝ որպես մարդկության գոյատևման արժեքաբանական հրամայականի ստեղծման կարիքը։ Գլոբալ էթիկայի հոգեբանական բազան պետք է կազմի մարդկությանը հատուկ ապրումակցման զգացումը։ Այսօր հարկ է գիտակցել նաև մարդասիրության մեծ «պակասուրդը», «քաղցը» արդի քաղաքակրթության մեջ, որը նույնպես, վերջին հաշվով, կարող է հանգեցնել մարդկության կործանման։

Այսպիսով՝ հումանիզմը մարդկության ինքնապահպանության չափազանց կարևոր պահեստային, ռազմավարական ռեսուրս է, և աշխարհը կանգնած է հումանիստական հեղափոխության՝ իբրև ազգերի ու ողջ մարդկության գոյատևման ու զարգացման հիմնական պայմանի առջև։ Մարդկությունը պետք է կենտրոնացնի իր մտավոր ու բարոյական ռեսուրսները և քաղաքակրթության զարգացման տարերային տիպից անցում կատարի դեպի դրա հումանիստորեն ուղղորդվող տեսակը։ Սա կարևոր է նաև աշխարհի ժողովուրդների հետագա մերձեցման, համախմբման անհրաժեշտության գիտակցման տեսանկյունից։

Է.Մարգարյանը խոսում է նաև քաղաքակրթության զարգացման համաշխարհային ու ազգային տեսանկյունների փոխհարաբերությունների, փոքր ազգերի գոյատևման ու զարգացման, հետագա ճակատագրի ու հեռանկարների մասին։

Վերլուծելով խաղաղության հիմնարար գաղափարը՝ Է. Մարգարյանը համոզված է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես վերջին երեք տասնամյակների ընթացքում այն կրել է էական փոփոխություններ: Եթե նախկինում արտահայտում էր հասարակության այնպիսի վիճակը, որը հակադիր է պատերազմին, ապա ներկայումս դրա բովանդակությունը նշանակալիորեն հարստացել է: Պայքարը խաղաղության համար, ըստ էության, դարձել է պայքար մարդկության ինքնապահպանության, հնարավոր համաշ-խարհային միջուկային կործանումից խուսափելու համար: Պետք է ձևավորվի քաղաքակրթության՝ իր բնույթով սկզբունքորեն այլ՝ հումանիստական կողմնորոշմամբ արժեքային նորմատիվ հիմք, որը կփոխարինի իրենց դարն ապրած կայսերական արժեքներին ու նորմերին՝ հիմնված ուժի պաշտամունքի, նվաճումների, ժողովուրդների նկատմամբ խտրականության կիրառման պրակտիկայի վրա:

Անհրաժեշտ է մշակել պատերազմի մշակույթից խաղաղության մշակույթին անցման հիմնարար սկզբունքներ ու մեխանիզմներ: Է. Մարգարյանը ներմուծել է նաև «խաղաղության որակ» հասկացությունը, որը կոչված է մարդկության ուշադրությունը կենտրոնացնել այն հանգամանքի վրա, թե ժողովուրդների կողմից ինչպես է օգտագործվում ձեռք բերված խաղաղությունը: Խաղաղության հիմնախնդրի լուծման բանալին նաև «մշակույթ» երևույթի անհրաժեշտ համակարգային իմաստավորման, բացատրման և օգտագործման մեջ է:

Բազում հիմնախնդիրների մշակման հարցում այնքան մեծ է գիտնականի ներդրումը, որ Ամերիկյան կենսագրական ինստիտուտը (ABI) Է.Ս.Մարգարյանին ներկայացրեց «Տարվա մարդ» (1998) տիտղոսի կոչման, նրան ներառելով «500 անվանի առաջնորդներ»-ի ցուցակում, իսկ անցյալ դարի 90-ական թթ. վերջին՝ «20-րդ հարյուրամյակի ականավոր մարդ» տիտղոսի կոչման:

2006 թ. Է.Մարգարյանը ընտրվում է Ռուսաստանյան (գիտակրթական) մշակութաբանական ընկերության պատվավոր անդամ: Ականավոր գիտնականի մշակած հայեցակարգերը լայն ճանաչում ունեին մասնագետների շրջանում՝ դառնալով նաև միջազգային գիտական խորհրդակցությունների հիմք: Ավելին, նրա հոբելյանների առիթով Մոսկվայում (1999), Ս-Պետերբուրգում (2010) կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ, ընթերցումներ: Դրանցից վերջինը կազմակերպվել է 2015 թ. նոյեմբերի 19-20 Մոսկվայի

մշակույթի պետական ինստիտուտի և Ռուսաստանյան մշակութաբանական (գիտակրթական) ընկերության նախաձեռնությամբ՝ «Է.Ս.Մարգարյանի գաղափարները ժամանակակից մշակութաբանության մեջ» թեմայով:

2014 թ. ծննդյան 85-ամյա հոբելյանի օրերին Մոսկվա-Սանկտ-Պետերբուրգի հումանիտար նախաձեռնությունների կենտրոնը «Մշակութաբանություն.20-րդ դար» մատենաշարով լույս է ընծայել Է.Ս.Մարգարյանի երկերի «Ընտրանին»[9]: Մասնագետների կարծիքով, 20-րդ դարում Վ.Օստվալդից (1853-1932) ու Լ.Ուայտից (1900-1975) հետո մշակութաբանության «երրորդ ծնունդն, , ու զարգացումը իրավմամբ կապվում է նրա անվան հետ: Այդ մասնագետներից՝ «Ընտրանին» կազմող և պատասխանատու խմբագիր Ա.Վ.Բոնդարևը իր վերլուծությունը սկսում է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր գիտության մեջ կան խորհրդանշական դեմքեր, որոնք նշանակալի չափով որոշում են դրա ընդհանուր զարգացման ու հետազոտական որոնումների բովանդակությունը: 20-րդ դարի երկրորդ կեսի հայրենական մշակութաբանության համար այդպիսի նշանավոր դեմքերից մեկը Էդուարդ Սարգսի Մարգարյանն էր»[10] , իսկ հայ փիլիսոփայության պատմաբան Կ.Ա.Միրումյանը նկատում է. «Ժամանակակից ուսանողությունը, ցավոք, շատ քիչ բան գիտի այնպիսի ականավոր փիլիսոփա գիտնականների մասին, ինչպիսիք են ... Էդուարդ Մարգարյանը ... և ուրիշներ, որոնց աշխատություններն այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքն ու հրատապությունը»[11]:

Է. Մարգարյանը մահկանացուն կնքել է 2011 թ. մարտի 12-ին, Մոսկվայում, աճյունն ամփոփված է Երևանի քաղաքային պանթեոնում: Երևանի քաղաքապետարանի որոշմամբ Տերյան փողոցի 62 տան պատին (որտեղ երկար տարիներ ապրել է Է.Մարգարյանը) տեղադրվել է գրանիտե հուշատախտակ՝ ի հավերժացումն արժանավոր գիտնականի հիշատակի:

---

[9] **Маркарян Э.С.,** Избранное. Наука о культуре и императивы эпохи. Отв.ред и составитель А.В. Бондарев., М., СПб, 2014, 656 С.

[10] **Бондарев А.В.,** Третье рождение культурологии: Вклад Э.С. Маркаряна в разработку культурологической теории культуры. В кн. **Маркарян Э.С.**, Избранное, М., СПб, 2014.С.563.

[11] **Միրումյան Կ.,** Ազգային մշակույթի մեթոդաբանական հայեցակարգի հարցի շուրջ «Ակադեմիկոս Համլետ Գևորգյանը 90 տարեկան» գրքում, Եր., 2017, էջ 85:

Է.Մարգարյանի բարոյական նկարագրի, հայացքների, մարդասիրական գործունեության համառոտ քննությունը հիմք են տալիս նրան դասելու մերօրյա անվանի հումանիստներ Ալբերտ Շվեյցերի (1875-1965) և Դմիտրի Լիխաչովի (1906-1999) շարքին։

Ինքը՝ պրոֆեսորը, համարում էր, որ իր աշխատությունները, գաղափարներն ու ծրագրերը, մշակած գիտակարգերն ու հայեցակարգերը հայ ժողովրդի մտավոր սեփականությունն են և նպատակ ունեն բարձրացնելու Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում, մանավանդ եթե դրանք ընկալվեն, գործադրվեն ու տարածվեն նաև պետական մակարդակով։

ԱՄՓՈՓՈՒՄ

Է.Մարգարյանը մեր ժամանակների մեծ հումանիստ է, ինչը, նախ և առաջ, պայմանավորված է նրա ստացած դաստիարակությամբ ու կրթությամբ, բարձր բարոյական չափանիշներով, գիտական հետաքրքրություններով և այն արժեքներով, որոնք նա ներկայացրել է իր ողջ կյանքի ընթացքում։ Ստանալով իրավաբանական կրթություն, Է.Մարգարյանը հրաժարվեց դիվանագիտական կարիերայից՝ իրեն ամբողջովին նվիրելով գիտությանը։ Անցյալ դարի 60-80-ական թթ. մշակեց մի շարք հիմնարար հայեցակարգեր, որոնց հիման վրա ստեղծեց Հայկական մշակութաբանական դպրոց։ Պատահական չէ, որ 20-րդ դարում Վ.Օստվալդից (1853-1932) և Լ.Ուայտից (1900-1975) հետո մշակութաբանության «երրորդ ծնունդն» ու զարգացումը իրավմամբ կապվում է նրա անվան հետ։

Է.Մարգարյանի գիտական գործունեության երկրորդ շրջանին, որը ընդգրկում է 80-ական թթ. կեսերից մինչև կյանքի վերջը, բնորոշ է հումանիստական ուղղվածությունը, խարսխված առաջին շրջանի զուտ տեսական հետազոտությունների արդյունքների վրա։ 1990-ական թթ. Մարգարյանի գիտական գործունեությունը կենտրոնանում է մարդկության գոյատևման ու զարգացման ռազմավարական հիմնախնդիրների վրա։ Է.Մարգարյանի բարոյական նկարագրի, հայացքների ու մարդասիրական գործունեության համառոտ քննությունը իրավմամբ հնարավորություն է տալիս նրան դասելու մերօրյա անվանի հումանիստներ Արբերտ Շվեյցերի (1875-1965) և Դմիտրի Լիխաչովի (1906-1999) շարքին։

Բանալի բառեր. մշակույթ, մշակութաբանություն, հայկական մշակութաբանական դպրոց, հումանիզմ, մարդկության

ինքնապահպանության գաղափարախոսություն, համաշխարհային քաղաքակրթություն։

ВЕЛИКИЙ ГУМАНИСТ И УЧЕНЫЙ

(к 90-летию рождения Э.С.Маркаряна)

Геворк Погосян
Академик НАН РА,
доктор социологических наук, профессор,
научный руководитель Института философии,
социологии и права НАН РА
Саркис Айрапетян
Кандидат философских наук, доцент
Армянского государственного экономического университета

РЕЗЮМЕ

Э. Маркарян – великий гуманист наших дней, что прежде всего обусловлено полученными им воспитанием и образованием, высокими нравственными критериями, научными интересами, теми ценностями, которые он представил в течении всей своей жизни. Получив юридическое образование Э.Маркарян отказался от дипломатической карьеры и целиком посвятил себя науке. В 60-80-х годах прошлого столетия разработал ряд фундаментальных концепций, на основе которых создал армянскую культурологическую школу. И неслучайно, что в 20-м веке после В.Оствальда (1853-1932) и Л.Уайта (1900-1975) “третье рождение” и развитие культурологии по праву связывается с его именем. Следующему периоду научной деятельности Э.Маркаряна, который включает в себя с 80-х годов до конца жизни, характерна гуманистическая направленность, основанная на результатах чисто теоретических исследований первого периода. С 90-х годов научная деятельность Маркаряна концентрируется на стратегических проблемах выживания и развития человечества. Краткое обсуждение нравственного облика, взглядов и гуманистической деятельности Э.Маркаряна позволяет назвать его последователем выдающихся гуманистов нашего времени Альберта Швейцера (1875-1965) и Дмитрия Лихачева (1906-1999).

Ключевые слова: культура, культурология, армянская культурологическая школа, гуманизм, идеология самосохранения человечества, мировая цивилизация.

THE GREAT HUMANIST AND SCIENTIST
(to the 90th anniversary of E.S. Margaryan)

Gevorg Poghosyan
Full member of the NAS RA,
Doctor of Sociology, Professor,
Scientific Director of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA
Sargis Hayrapetyan
Candidate of Philosophical Sciences,
Associate Professor,
Armenian State University of Economics

SUMMARY

E. Markaryan is a great humanist of our days, due to his education, high moral standards, scientific interests, and the values that he presented throughout his life. After getting a law degree, he left his diplomatic career and devoted himself entirely to science. In the 60s-80s of the last century, he developed a number of fundamental concepts, which are the basis of Armenian culturological school. It is of no coincidence that in the 20th century after W. Ostwald (1853-1932) and L. White (1900-1975) the development of culturology is associated with E. Markaryan. The next period of scientific activity of E. Markaryan, which includes the period from the 80s to the end of his life, is characterized by the humanistic orientation, based on the results of theoretical study of the first period. Since the 1990s, Markaryan's research has focused on the strategic issues of human survival and development. The brief discussion of the moral character, views and humanistic activities of E. Markaryan allows us to call him the follower of the outstanding humanists of our days Albert Schweitzer (1875-1965) and Dmitriy Likhachev (1906-1999).

Keywords: culture, culturology, Armenian culturological school, humanism, the ideology of human survival, world civilization.